ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 378- Ա 15 հուլիսի 2016 թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետը

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 830000 /ութ հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել մի խումբ քաղաքացիների միանվագ օգնություն տրամադրելու համար՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով տասնօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | մարզային վարչության ուժերը բոլոր ուսումնական տեղամասերում իրականացնում են հասարակական կարգի պահպանման միջոցառումներ: |
| 5 | 14:00-14:40 | Ուսումնավարժության ավարտ և արդյունքների ամփոփում | Ուսումնավարժության ղեկավարը հայտարարում է ուսումնավարժության ավարտ: Գնահատում է ուսուցանվողների գործողությունները, նշում է թերությունները և տալիս հանձնարարականներ դրանց վերացման ուղղությամբ: | Մասնակցում են ուսումնավարժության ամփոփմանը: |

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի
մարզպետարանի աշխատակազմի
ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար

Ալբերտ Աղեկյան

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | հանձնաժողովը կազմակերպում է վտանգավոր տարածքից տուժած բնակչության տարահանման միջոցառումները,<br>3) տարահանման հավաքակայանի վարչակազմը՝<br>– իրականացնում է տարահանվող բնակչության հավաքը և տեղափոխումը հավաքակայան,<br>– իրականացնում է ժամանած բնակչության ընդունումը, հաշվառումը և տեղաբաշխումը,<br>– ապահովում է հավաքակայանում հասարակական կարգի պահպանումը,<br>– ապահովում է հավաքակայանում հակահրդեհային պաշտպանությունը,<br>– ապահովում է սննդի և այլ նյութական միջոցների ընդունումը և բաշխումը,<br>– ապահովում է տեղեկատու սեղանի գործունեությունը,<br>– ապահովում է մոր և մանկան սենյակի գործունեությունը,<br>– ապահովում է բժշկական կետի գործունեությունը:<br>3. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ժության մասնակիցները ներկայանում են մարզպետարան խնդրադրման. |
| 4 | 12:10-14:00 | Տարահանման հավաքակայանի աշխատանքների ծավալում, տուժած և անօթևան մնացած բնակչության տարահանում: | Ներկայացնում է ռմբակոծության հետևանքով ստեղծված իրավիճակը և տալիս կարգադրություն տուժած և անօթևան մնացած բնակչության տարահանման միջոցառումների իրականացման վերաբերյալ: Հետևում է տարահանման հանձնաժողովի գործողություններին: | Ստանալով խնդրադրում՝<br>1. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունը համագործակցելով «Արմենտել» ՓԲԸ Գեղարքունիքի տարածքային կենտրոնի և էլեկտրացանցի հետ 1-ին և 2-րդ ուսումնական տեղամասերը հարմարեցնում է, որպես պահեստային կառավարման կետեր: Անհրաժեշտության դեպքում հետագա կառավարումն իրականացվում է. հարմարեցված պահեստային կառավարման կետերից:<br>2. 3-րդ ուսումնական տեղամասում (Վահան համայնքի միջնակարգ դպրոցում)՝<br>1)մարզի տարահանման հանձնաժողովը՝<br>– կազմակերպում է տարահանման հավաքակայանի աշխատանքների ծավալումը,<br>– վերահսկում և կոորդինացնում է համայնքային տարահանման հանձնաժողովի աշխատանքը,<br>2) համայնքային տարահանման |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Վահանի համայնքապետարանի ղեկավար կազմը: |
| 2 | 10:10-10:40 | Ղեկավար կազմի գործողությունները «Օդային տագնապի ավարտ» ազդարարման ազդանշանի դեպքում: | Տալիս է հրահանգ «Օդային տագնապի ավարտ» ազդարարման ազդանշան հնչեցնելու մասին և հետևում մասնակիցների գործողություններին: | 1. Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ-ն կապի միջոցներով, դրանց բացակայության դեպքում սուրհանդակների միջոցով «Օդային տագնապի ավարտ» ազդարարման ազդանշանը հասցնում է ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությանը և պատասպարված ղեկավար կազմին:<br>2. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության շրջիկ խմբերը շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ հաղորդում են «Օդային տագնապի ավարտ» ազդարարման ազդանշանը:<br>3. Պատսպարված ղեկավար կազմը ստանալով «Օդային տագնապի ավարտ» ազդարարման ազդանշանը կազմակերպված դուրս է գալիս թաքստոցներից և վերադարնում իրենց աշխատատեղեր: |
| 3 | 10:40-12:10 | Մարզի ղեկավար կազմի ազդարարում և հավաք: | Տալիս է հրահանգ մարզի ղեկավար կազմի ազդարարման և հավաքի վերաբերյալ և վերահսկում դրա կատարումը: | 1. Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ-ն իրականացնում է մարզի ղեկավար կազմի ազդարարումը նշելով հավաքի վայրը:<br>2. Ստանալով «Հայտարարված է հա-վաք» ազդանշանը ուսումնավար- |

## ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

| Հ/Հ | ԺԱՄԱ-ՆԱԿԸ (աստղ աբաշխական) | ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | 10:00-10:10 | Հակառակորդի օդային հարձակման անմիջական սպառնալիքի մասին մարզի ղեկավար կազմի ազդարարում և պատսպարում: | Տալիս է հրահանգ «Օդային տագնապ» ազդարարման ազդանշան հնչեցնելու մասին և հետևում մասնակիցների գործողություններին: | 1. ՀՀ Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ-ն «Արմենտել» ՓԲԸ Գեղարքունիքի տարածքային կենտրոնին տալիս է «Օդային տագնապ» ազդարարման ազդանշանը:<br>2. «Արմենտել» ՓԲԸ Գեղարքունիքի տարածքային կենտրոնի կողմից գործարկվում է կենտրոնի վարչական շենքի տանիքում տեղադրված էլ. շչակը:<br>3. «Օդային տագնապ» ազդարարման ազդանշանը ստանալով՝<br>– 1-ին ուսումնական տեղամասում ( Գեղարքունիքի մարզպետարանի նկուղային հարկում) պատսպարվում է մարզպետարանի ղեկավար կազմը,<br>– 2-րդ ուսումնական տեղամասում (Վահանի միջնակարգ դպրոցի հարակից բնակարանների նկուղային հարկերում) պատսպարվում է |

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի [signature] թիվ 379-Ա որոշման

# ՊԼԱՆ

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

__Թեմա__ «Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանությունը հակառակորդի օդուժի հարձակման դեպքում» գործնականում իրականացնելով ազդարարման, պատսպարման և տարահանման միջոցառումներ:

__Ուսումնական նպատակներն են՝__

1. կատարելագործել արձագանքող ուժերի ղեկավար կազմի գործնական հմտությունները բնակչության պաշտպանության միջոցառումների կատարման ուղղությամբ,
2. ստուգել ՔՊ ծառայությունների, կազմավորումների և տարահանման մարմինների պատրաստվածությունը ստեղծված իրավիճակներում իրենց առջև դրված խնդիրների կատարման ուղղությամբ,
3. ստուգել համապատասխան պլանների իրատեսությունը:

__Ուսումնավարժությանը ներգրավում են՝__ ՀՀ Գեղարքունիքի մարզի ՔՊ ղեկավար կազմը, ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությունը, մարզային տարահանման հանձնաժողովը և Վահան համայնքի տարահանման հանձնաժողովը:

__Ուսումնավարժության անցկացման օրը՝__ **29.07.2016թ.**

__Անցկացման վայրը՝__ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենք, Վահան համայնքի միջնակարգ դպրոց:

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կառավարության 2000թ. սեպտեմբերի 28-ի N592 որոշման և «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 18-ի N1180-Ն որոշման ուսումնասիրում | | | |
| Ուսուցանվողների նախապատրաստումը | | | | |
| 6 | ՀՏՈՒ մասնակիցների ազդարարման ցուցակների և սխեմաների ճշգրտում | Մինչև 19.07.2016թ. | Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ | |
| 7 | ՀՏՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում | Մինչև 21.07.2016թ. | Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ | |
| 8 | Տարահանման հավաքակայանում գործածվող փաստաթղթերի մշակում և վարման հետ ծանոթացում | Մինչև 20.07.2016թ. | Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ | |
| 9 | Գործնական միջոցառումների իրականացման ուղղությամբ հրահանգավորում | Մինչև 22.02.2016թ. | Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ | |
| Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում | | | | |
| 10 | Ուսումնավարժության վայրի տեղազննում | Մինչև 22.07.2016թ. | Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ | |
| 11 | Տեղամասերի նախապատրաստում | Մինչև 25.07.2016թ. | Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ | |
| 12 | Տեղամասերում կապի միջոցների ծավալում | Մինչև 25.07.2016թ. | Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ | |

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի
մարզպետարանի աշխատակազմի
ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար

Ալբերտ Աղեկյան

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի

2016 թվականի 22 հուլիսի թիվ [illegible] որոշման

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետները | Պատասխանատու կատարողներ | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | Փաստաթղթերի մշակում | | | |
| 1 | Ելակետային տվյալների որոշում՝ թեմա, անցկացման ժամկետ, վայր, մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ | Մինչև 19.07.2016թ. | Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարի տեղակալ | |
| 2 | Օրացուցային պլանի մշակում և հաստատման ներկայացում | Մինչև 19.07.2016թ. | Ուսումնավարժության ղեկավարի օգնական | |
| 3 | ՀՏՈՒ անցկացման պլանի մշակում և հաստատման ներկայացում | Մինչև 20.07.2016թ. | Ուսումնավարժության ղեկավարի օգնական | |
| | Ղեկավար կազմի նախապատրաստում | | | |
| 4 | ՀՏՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում | Մինչև 22.07.2016թ. | Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ | |
| 5 | «ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 3-ի N1925 որոշման, «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» ՀՀ | Մինչև 23.07.2016թ. | Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ | |

4. Հատուկ տակտիկական ուսումնավարժությանը ներգրավել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմին, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը, մարզային տարահանման հանձնաժողովին և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վահան համայնքի տարահանման հանձնաժողովին:

5. Հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման խմբին՝

- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարի տեղակալ Կարեն Հակոբյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց, ներգրավված ուժերի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,

2) մինչև 2016 թվականի հուլիսի 25-ը զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին,

- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ փրկարարական ծառայության գնդապետ, հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարի օգնական Էդիկ Գալստյանին՝ ապահովել համագործակցությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վահանի համայնքապետարանի հետ ուսումնավարժության անցկացման հարցերում (ազդարարում, պատսպարում և տարահանում):

- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վահան համայնքի ղեկավար, հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարի օգնական Գուրգեն Բալյանին՝

1) ուսումնավարժության ընթացքում ապահովել համայնքապետարանի ղեկավար կազմի պատսպարման գործընթացը

2) կազմակերպել տարահանման հավաքակայանի աշխատանքները:

6. Հատուկ տակտիկական ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, համալրել անձնակազմը համապատասխան գույքով,

2) զեկուցել ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ